

Նանա

-

Էրոտիկ տրանսճամփորդություն կանանց համար



Լորդ Շադտ

Թարգմանությունը՝ Սարգիս Մկրտչյանի

Լորդ Շադտ

Նանա

-

Էրոտիկ
տրանսճամփորդություն
կանանց համար

Կազմանկարը՝ Եվա Գ. Համիլտոնի
Հայերեն թարգմանությունը՝ Սարգիս Մկրտչյանի

ॐ

सच्चिदानन्द परब्रह्मा
पुरुषोत्तम परमात्मा
री भगवती समेत श्री भगवते नमः।

Խորհուրդներ գիդերին

- 1) Տրանսճամփորդության ժամանակ միզելու ընդմիջում նախատեսված չէ: Այդ իսկ պատճառով ավելի սիրալիր կհամարվի ճամփորդությունը սկսելուց առաջ տրանսճամփորդողների ուշադրությունը գրավել այն բանի վրա, որ նրանք անհրաժեշտության դեպքում այցելեն զուգարան:
- 2) Քաղցած և ծարավ ճամփորդելը պարզևուրմ է պակաս հաճույք: Այդ իսկ պատճառով առավել սիրալիր է ճանապարհորդողին ոչ կենդանական տանջանքի արդյունք հանդիսացող ուտեստի և խմիչքի՝ ազատ տնօրինության տրամադրելը:
- 3) Գիտակցությունն ընդլայնող նյութերը կարող են տրանսճամփորդության համար լիացման տարբերակ լինել: Այնուամենայնիվ դրանք կարող են երբեմն խնդրահարույց լինել: Այստեղ պարտավոր է յուրաքանչյուր գիդ, սեփական փորձից ելնելով, ինքնուրույն որոշել, որ խմբերն են դրանց համար առավել կիրառելի:
- 4) Տրանսճամփորդությունները պատկանում են ուղեցուցային գրականության ժանրին: Այսպիսով խնդիր չէ, եթե տեքստը հարմարեցվի սեփական ցանկություններին և փորձին:
- 5) Ինչքան ավելի գեղեցիկ է շրջակա միջավայրը, այնքան ավելի խորը՝ տրանսը: Այդպիսով

անհրաժեշտ է ուշադրություն դարձնել զգայական և հարմարավետ միջավայրի վրա՝ առանց խանգարող գործոնների, ինչպես օրինակ բջջային հեռախոսի զանգելը:

- 6) Յուրաքանչյուր լավ ճամփորդություն պահանջում է ժամանակ, որն իրեն անհրաժեշտ է: Եվ սա արդի է նաև բարձր կարգավու դեպում: Ով ավելի դանդաղ է ճամփորդում, տեսնում է շրջակա միջավայրից ավելի շատ՝ չնայած որ երբեմն տրամադրությունը կապված է արագությունից ստեղծվող ցնծության հետ:

Տրանստուրը մաղթում է ուրախ ճանապարհորդություն:

I

Բարի՛ գալուստ:

Միգուցե դու կցանկանայիր հետևել իմ ձայնին,
քանի որ ես ուզում եմ քեզ հրավիրել մի
ճամփորդության դեպի կանացի վայելքի աշխարհ:

Դիտի՛ր ինձ որպես քո ուղեկցորդուհի,
ով քեզ դանդաղորեն և նրբորեն կուղեկցի քո
ճամփորդության ընթացքում:

Մենք ճամփորդում ենք միայն մեր գլուխներում.

այսպիսով դու կարիք չունես ճամփորդության սննդի
պաշարների, փողի, պայուսակի և քնելու տեղի:

Մեր ճամփորդության տարածքային քարտեզը ես
երկար ժամանակ ուսանել եմ և գիտեմ մեր
ճանապարհները՝ փորձից ելնելով:

Միակ բանը, որը մեզ այժմ անհրաժեշտ է,
արձակուրդային ուրախության որոշակի
նախատրամադրվածությունն է և թուլացնող
արկածների տրամադրությունը:

Հաջորդիվ կճանապարհորդենք քո գլխում և մեզ լավ
կզգանք,

ամենավերջում կմեկնենք քո ֆանտազիաների աշխարհ
և գեղեցիկ կմտածենք,

այնուհետև մտքերով կայցելենք քո գվարճալի
կենտրոնը, այսինքն հեշտոցը,

և մինչ մենք այստեղ կրկին ուրախ գրգռված կժամանենք, կայցելենք քո կանացի աուրայի հոգևոր աշխարհը: Ես գիտեմ, որոշակի կանայք չեն սիրում հեշտոց բառը, և այդ իսկ պատճառով մենք՝ կանայք, ունենք ուրախ մի առաջադրանք՝ մեր համեղ-անկուշտ, լայն բացվող ու փնփշիկ սիրաբերանին սեփական անուն նվիրելու: Դու պետք է որ քո անունն արդեն գտած լինես, և ինձ համար որևէ դեր չի խաղում, թե դու նրան Մոմո, Կիկի, Կոկո, Լիլի, Մումու կանվանես, թե օրիորդ Ուշի կամ Տիկին Ֆրեիյա: Մեր ճամփորդության ընթացքում կանվանեմ ես այն Նանա, քանի որ այս անունը ինձ դուր է գալիս:

Եվ եթե այն քեզ դուր չի գալու, ապա քո մտքում փոխարինի՛ր այն քեզ համար ավելի հարմար անվամբ: Միզուցե հիմա դու զգում ես քո մեջ կամաց հարցը. „Ու՞ր եմ ես ընկել“:

Որպես ճամփորդության ղեկավարուհի սիրում եմ այս հարցը, քանի որ այն ինձ ցույց է տալիս, որ իմ ուղեկցորդուհիները այս ճամփորդությունը հենց այսպես դեռևս չեն ձեռնարկել, և ոչինչ առավել ձանձրալի չէ, քան ճանապարհորդությունը, որտեղ ամեն ինչ հայտնի է:

Իմիջիայլոց, ես հայտնի եմ որպես զվարճացնող, կյանքով լեցուն ղեկավարուհի, և նույնիսկ եթե ճամփորդության սկզբում իմ ուղեկցորդուհիներից մի քանիսը ինձ ցնորվածի տեղ են դրել, այնուամենայնիվ

իմ բոլոր ուղեկցորդուհիները հասել են այն նպատակին, որն իրենք ճամփորդության սկզբում ակնկալում էին:

Եվ միգուցե դու արդեն նկատել ես, որ այս ճամփորդությունը մի մեծ ճաշարան է, որտեղ դու ինքդ ես որոշում, թե ինչ ես դու ուզում ուտել,

և վերջում մենք բոլորս մեր ճաշակներով հանդերձ կուշտ ենք լինելու,

և քանի որ այս համեղ ճաշարանի բոլոր ուտեստները քո գլխում են գտնվում,

կարևորը միայն այն է,

որ դու հարմար նստես կամ պառկես,

որպեսզի քո մարմինը կարողանա թուլացած հետ ընկնել:

Ես վստահ եմ՝ քո մարմինը կգտնի այստեղ թուլացում, որն այն արդեն վաղուց վաստակել էր:

Եվ ևս մեկ կարևոր բան.

քանի որ մենք հետո մտքերով քո հաճույքի կենտրոն եք ճամփորդելու, ուզում եմ, որ այն մեզ հնարավորինս ուժեղ և սիրալիր ընդունի:

Մենք՝ որպես կանայք, գիտենք, որ մեր Նանան նաև մի մեծ ուռչող մարմին է,

որն այնքան է ուժեղանում, ինչքան որ մարդն այն մարզում է:

Փորձառու կանայք ասում են, որ Նանան մոտ կես ժամ է պահանջում՝ իր ամբողջական չափին հասնելու համար:

Մենք բոլորս ունենք այժմ ժամանակ, որը մեզ անհրաժեշտ է, և քո ուշադրությունը խթանելու և քո գլուխը մտածելուց մի փոքր ազատելու համար կուզենայի, որ դու քո ուշադրությունը դեպի քո կենտրոնն ուղղես

այն ձևով, որ դու թողնես, որ քո Նանան քո ռիթմին համապատասխան շնչի:

Դա ավելի հեշտ է և թուլացնող, քան թե դու հիմա մտածում ես:

Ներշնչելու ժամանակ թուլացնում ես քո հաճույքի աղբյուրը և ընդլայնում ես քո Նանայի մկաններն այնպես, կարծես թե դու ինչ-որ հսկայական բան ես ընդունում:

Իսկ արտաշնչելիս լարում ես քո ներքին մկանները այնպես, կարծես թե դու ուզում ես քեզ շատ կարևոր մի բան քո խորքում ամուր պահել:

Շատ պարզ ևս մեկ անգամ.

ներշնչելիս լարում ես քո հաճույքի աղբյուրը՝ ներշնչել:

Իսկ արտաշնչելիս լարում ես քո ներքին մկաններ՝ արտաշնչել:

Տարօրինակ բժիշկները դա անվանում են կոնքազոտու մարզում, բայց մեր՝ կանանց գեղեցիկ գաղտնիքն այն է,

որ մարդ կարող է այս ձևով իրեն լավ տրամադրություն պարզել:

Ներշնչե՛լ - ընդարձակվել:

Արտաշնչե՛լ - նեղանալ:

Ներշնչե՛լ - խորը թուլանալ:

Արտաշնչե՛լ - ձգվածությունը ամուր պահել:

Ներշնչե՛լ - ուրախանալ:

Արտաշնչե՛լ - ուրախությունը ամուր պահել:

Ներշնչե՛լ - էներգիա ստանալ:

Արտաշնչե՛լ - էներգիան ամուր պահել:

Ներշնչե՛լ - հաճույք ստանալ:

Արտաշնչե՛լ - հաճույքը ամուր պահել:

Այս շնչառությունը կուղեկցի մեզ մեր ճամփորդության ընթացքում, և դու արագ կնկատես, որ չկա ավելի պարզ բան, քան քո մարմնի հետ միասին շնչելը:

Եվ միգուցե դու արդեն զգում ես, որ ամեն մի ներշնչման հետ դու ավելի շատ կարող ես ներգրավվել այս ճամփորդության մեջ,

իսկ ամեն մի արտաշնչում քեզ մի քիչ ավելի ուժեղ է դարձնում:

Իմ փորձը և իմ սիրտը ինձ ասում են՝

ամեն մի կին ավելի ուժեղ է, քան ինքը մտածում է:

Եվ ոչ մի անհանգստություն, եթե դու այս շնչառությունը մոռանաս. ես հնարավորության դեպքում քեզ նորից կհիշեցնեմ դրա մասին:

Ես կարող եմ ձեզ վստահեցնել՝

մենք ունենք այստեղ բավարար օդ բոլորի համար:
Եվ այս հանգստացնող մտքի հետ կթուլացնենք մենք
մեզ ավելի ու ավելի...
Զգա՛, թե դու ինչպես ես դանդաղ ներշնչում և
արտաշնչում,
բացի՛ր ականջներդ՝ իմ՝ միշտ ավելի ու ավելի նուրբ
ձայնին ականջ դնելու համար,
զգա՛, թե ինչպես է աշխարհը քեզ կրում,
համտեսի՛ր նրա համը քո լեզվի վրա
և միգուցե դու քեզ կզգաս ավելի թուլացած, քան առաջ:
Եվ դու կարող ես զգալ, թե ինչպես է թուլանում քո
մեջքը,
է թե ինչպես է քո տուտուզը հարմարավետորեն նստում
ճիշտ տեղում:
Ուշադրություն՝ն դարձրու տարածքից դուրս գտնվող
աղմուկին
և զգա՛ քո ներսում առկա նուրբ ձայնը,
և այժմ կարող ես շատ հեշտորեն էլ ավելի թուլանալ:
Ուշադրություն՝ն դարձրու օդի հոսքին դեպի քո քիթը,
զգա՛ ձեռքերդ, միգուցե թե ինչպես են դրանք
շոշափվում, և թող որ դու ավելի խորը սուզվես.
բոլոր մտքերը կարող են շարունակվել,
իսկ դու կարիք չունես որևէ բան ամուր պահելու:
Եվ այն ընթացքում, երբ դու իմ ձայնն ես լսում,
կարող ես ամբողջությամբ դեկավարվել քո ներքինով.

դու գիտես, թե դու ինչպես կարող ես այս թուլացումը առավել ուժեղացնել:

Այո, հենց այդպես է ճիշտը:

Եվ ինչպես որ դու արդեն վստահորեն գիտես, մենք տեսնում ենք չափից շատ և զգում շատ քիչ:

Միգուցե քո աչքերը զգում են խորը հոգնածություն և առկայծում են,

և եթե դու դրանք դեռ չես փակել,

ապա կարող ես այժմ փակել:

Եվ ինչքան քո աչքերը հոգնած են,

այնքան ավելի առույգ է զգում իրեն քո մարմինը:

Եվ դու կարող ես այժմ ուրախանալ, որ դու ամբողջապես նոր փորձ ես ձեռք բերում՝

հարմարավետ ճամփորդություն միայն քո գլխում:

Եվ ինչպես արդեն նշվել է, առաջին հերթին կճամփորդենք քո գեղեցիկ մարմնում:

II

Ինչ էլ որ քեզ երբևէ ասվել է, և ինչ էլ որ դու միշտ մտացած կարող էիր լինել,

մի բան կարող եմ քեզ վստահեցնել՝

բոլոր մարմինները զգում են իրենց լավ

և առավել լավ են իրենք իրենց զգացնել տալիս:

Այսպիսով, դու ավելի գեղեցիկ ես, քան դու կարող էիր պատկերացնել, քանի որ բոլոր մարմինները իրենց

առավել գեղեցիկ են զգացնել տալիս, քան իրենք կարող են պատկերացնել:

Այսպիսով, այս տիեզերքը գաղտնիք չէ. դու գեղեցիկ ես: Եվ եթե հանկարծ այստեղ մեկն այլ կարծիքի կարող է լինել, որը ես ինձ հազիվ թե կպատկերացնեի, ուրեմն մենք ուղղակիորեն կհարցնենք քո մարմնին, և դրա համար կզգանք և կհարցնենք մենք մեզ ներքևից դեպի վեր ամբողջ մարմնի միջով:

Իսկ իմ խոսքերը ճոճվում են օդի միջով և նրբորեն շոյում քո մարմինը,

և միգուցե դու արդեն զգում ես,

թե ինչպես են նրանք քո ուշադրությունը դանդաղորեն ուղղում քո ականջների միջով դեպի քո գլուխ,

քո գլխից դեպի քո կուրծք,

քո կրծքից դեպի քո որովայն,

քո որովայնից դեպի քո Նանա.

ներշնչե՛լ – արտաշնչե՛լ

քո Նանայից դեպի քո ոտքերը

և քո ոտքերից դեպի քո ոտնաթաթերը,

որոնք քեզ կանգնած ժամանակ միացնում են երկրագնդի հետ:

Եվ եթե մենք, այստեղ հասած, քո ոտնաթաթերին հարցնենք. „Արդեն ձեզ լա՞վ էք զգում“,

ապա միգուցե նրանք քո ոտնամատերի փոքրիկ շարժումով ազդանշան կտան,

քանի որ սա նրանց պատասխանելու ձևն է.

„Այո, մենք զգում ենք մեզ լավ“:

Եվ քանի որ նրանք իրենց այսպես, ինչպես որ նրանք կան, լավ են զգում,

կարող ես այժմ նրանց քո մտքերով այնպես շոյել,

որ նրանք իրենց ամենաշոյվածը զգան:

Ներշնչե՛լ – շոյել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Իսկ այժմ մենք մեր ուշադրությամբ կշրջենք քո ոտնաթաթերից դեպի քո ոտքերը,

որոնք շարժվում են այս երկրագնդի վրայով:

Եվ եթե մենք այժմ քո երկու ոտքերին էլ հարցնենք. „Ձեզ լա՞վ էք զգում“,

ապա նրանք իրենց մկանների թեթև շարժումով կամ հազիվ շոշափելի թրթիռով կպատասխանեն.

„Այո, մենք մեզ լավ ենք զգում“:

Եվ քանի որ նրանք իրենց այսպես, ինչպես որ նրանք կան, լավ են զգում,

կարող ես այժմ նրանց քո մտքերով այնպես շոշափել,

որ նրանք իրենց ամենաշոյվածը զգան:

Ներշնչե՛լ – շոյել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Իսկ այժմ մենք մեր ուշադրությամբ կթափառենք քո ոտքերից դեպի քո տոտուզ,

որը քեզ ամեն պահի ապահովում է այս երկրագնդի վրա հարմար նստատեղ:

Եվ երբ որ մենք քո տուտուզին հարցնենք.

„Քեզ լա՞վ ես զգում“,
ապա նա ենթադրաբար չի պատասխանի,
քանի որ նա այս պահին ուրախանում է՝ լավ զբաղված
լինելու համար:
Եվ քանի որ նա իրեն այնպես, ինչպես նա նստած է, լավ
է զգում,
կարող ես այժմ նրան կարճ ժամանակահատվածում քո
մտքերով այնպես շոյել,
որ նա իրեն ամենաշոյվածը զգա:
Ներշնչե՛լ – շոյել,
արտաշնչե՛լ – լավ զգալ:
Իսկ այժմ քո ուշադրությունը թափառում է քո
տուտուզից դեպի քո Նանա,
որն էլ քեզ հաճույք է նվիրում՝ այս երկրագնդի վրա
լինելու համար:
Եվ մենք պարտավոր չենք նրան ընդհանրապես
հարցնել, թե արդյոք նա իրեն լավ է զգում, թե ոչ,
քանի որ դու զգում ես, որ նա դա արդեն իսկ լավ է
անում:
Եվ քանի որ նա իրեն այնպես, ինչպես նա կա, լավ է
զգում, կարող ես նրան կարճ ժամանակով քո մտքում
համբուրել, որ նա իրեն ամենաշոյվածը զգա:
Ներշնչե՛լ – շոյել,
արտաշնչե՛լ – լավ զգալ:
Եվ եթե ես այստեղ թրթիռները ճիշտ եմ զգում,
ապա դա շատ կարճ էր,

այդ պատճառով հապաղում ենք այս տեղում ևս մեկ
շնչառություն,

քանի որ յուրաքանչյուր ճամփորդություն ևս կարիք
ունի խորը շնչելու ժամանակի, այսպիսով՝

Ներշնչե՛լ – շոյել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Իսկ այժմ քո ուշադրությունը շարունակում է հոսել
դեպի վեր՝ ուղղակիորեն դեպի քո որովայն,

որը միշտ հաճույքով սնվում է:

Եվ երբ մենք նրան հարցնենք.

„Միրելի՛ որովայն, քեզ լա՞վ ես զգում“,

ապա նա կպատասխանի առողջ տաք զգացումով.

„Այո, ես ինձ լավ եմ զգում“:

Եվ քանի որ նա իրեն այնպես, ինչպես նա կա, լավ է
զգում, կարող ես նրան կարճ ժամանակով քո մտքերով
այնպես կերակրել,

որ նա իրեն ամենաշոյվածը զգա:

Ներշնչե՛լ – շոյել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Իսկ այժմ քո ուշադրությունը շարունակում է հոսել
դեպի քո կրծքերը,

որոնք քեզ իրենց հաճույքն են նվիրում:

Եվ երբ մենք նրանց հարցնենք. „Ձեզ լա՞վ էք զգում“,

ապա նրանք կպատասխանեն իրենց կրծքածայրերով,

որոնք, ինչպես դու այժմ զգում ես, մի փոքր աճում
են՝ քեզ իրենց լեզվով ասելու համար.

„Այո, մենք մեզ լավ ենք զգում“:

Եվ քանի որ նրանք իրենց այնպես, ինչպես որ նրանք կան, լավ են զգում, կարող ես նրանց կարճ ժամանակով քո մտքերով այնպես զգվրտել, որ նրանք իրենց ամենաշոյվածը զգան:

Ներշնչե՛լ – շոյել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Իսկ այժմ քո ուշադրությունը մեկ անգամ սուրում է քո շուրջը դեպի քո մեջքը, որը քեզ մեծ է դարձնում և կրում:

Եվ երբ մենք նրան հարցնենք.

„Միրելի՛ մեջք, քեզ լա՛վ ես զգում“,

ապա նա կպատասխանի այն ձևով, որ թեթևակիրոն կձգվի՝ քեզ իր լեզվով ասելու համար.

„Այո, ես ինձ լավ եմ զգում“:

Եվ քանի որ նա իրեն այնպես, ինչպես նա կա, լավ է զգում, կարող ես այժմ նրան քո մտքերում նրբորեն շոյել և մերսել:

Ներշնչե՛լ – շոյել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Իսկ այժմ քո ուշադրությունը շարունակում է բարձրանալ վեր՝ դեպի քո դեմքը:

Եվ եթե մենք քո՝ այժմ թուլացած ճակատին, քո փակ, բայց արթուն աչքերին, քո բաց ականջներին, քո շնչող քթին, քո գրավիչ լեզվին և քո համբուրվող շրթունքներին միասին հարցնենք.

„Ձեզ լա՞վ էք զգում“,

ապա նրանք կպատասխանեն քեզ նուրբ ժպիտով քո
այտերի վրա.

„Այո, մենք մեզ լավ ենք զգում“:

Եվ քանի որ նրանք բոլորը միասին իրենց այնպես,
ինչպես նրանք կան, լավ են զգում, կարող ես այժմ
նրանց քո մտքերում քո՝ իրենց նույնքան լավ զգացող
ձեռքերով և ձեռնաթաթերով գրկել:

Ներշնչե՛լ – գրկել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

Ուրախ եմ, որ գեղեցկության այս գագաթը մենք միասին
բարձրացանք,

և մինչ մեր ճամփորդությունը կշարունակվի,

ես ունեմ ասելու ևս մեկ գեղեցիկ բան:

Համարյա թե այնպես է, որ կարծես բոլոր
կախարդական գեղեցիկ խոսքերը ստեղծված լինեն՝
հենց քեզ նկարագրելու համար:

Լսի՛ր ուրախությամբ, քանի որ այժմ գալիս է քո մարմնի
այբուրենը:

Միայն թե նախապես թարմացման համար.

Ներշնչե՛լ – մարմինն ազատ դարձնել,

արտաշնչե՛լ – մարմինը զգալ:

Եվ այն ընթացքում, երբ քո գլուխը լցվում է այս գեղեցիկ
խոսքերով, քո մարմինն իրեն զգում է
սիրալիր – կենդանական – ախորժալի,
ազահ – հարմարավետ – կախարդական,

քառասային – խարիզմատիկ – անկրկնելի,
բուրող – նրբագեղ – կոպիտ,
միայնակ – մեկանգամյա – էքստազային,
գրավիչ – մարմնական – նրբագգաց,
գաղտնի – ճկուն – կրքոտ,
երկնային – անխափան – այրող,
ինտենսիվ – ներքին – գաղափարով լեցուն,
ջազային – ցնծող – ուրախությունից ճչացող,
փափուկ – խուտուտոտ – կոկետ,
երկիմաստ – բորբոքվող – թուլացնող,
ուժեղ – հեքիաթային – համարձակ,
բնական – մերկ – հետաքրքրասեր,
անպարկեշտ – օվկիանոսային – օրգազմային,
պոետիկ – երևակայական – զարկող,
անհանգիստ – գոհ – կենսախինդ,
ռոմանտիկ – սուրացող – ձգող,
կատակային – բուռն – սահուն,
խորը – կենդանական – բնագդային,
անհոգ – ազատամիտ – անկուշտ,
համոզիչ – բազմատեսակ – սիրահարված,
հաճելի – հիանալի – փափուկ,
սանձարձակ – նուրբ – կախարդական:

Այսպես, և այս հրաշալի, հրաշագեղ և հիանալի
խոսքերից հետո մենք կշարունակենք և կտանենք մեր
ճամփորդությունն առաջ:

III

Մենք կմեկնենք այժմ մեր ճանապարհորդության և
դանդաղորեն կշարժվենք Նանայի ուղղությամբ և դրան
զուգահեռ մենք կանենք միջանկյալ դադար քո
մտածողության օրգաններում,
քանի որ ինչպես դու հաստատ գիտես,
նույնիսկ եթե քո գլուխը երբեմն այլ բան է տեսնում,
մարդիկ մտածում են ոչ միայն գլխով,
այլ նաև ունեն մտածողության երեք կենտրոն,
որոնցով նրանք տարբեր ձևով մտածում և զգում են.
քո գլուխը մտածում է մտքերով,
քո զգայական կենտրոնը զգում է զգացումներով և
նկարներով,
իսկ քո որովայնը զգում է քո մարմնով:
Մեր Նանան, ի հակառակ, ինքնուրույն չի մտածում,
այլ հանգստանում է ամբողջ ժամանակ,
մինչ նա մեր երևակայություններից ու զգացումներից
նրբորեն արթնանա,
և երբ նա այդ դեպքում ակտիվանա,
կոլորվի , պատկերավոր ասած՝
մեր միջով դեպի վեր
և կօգտագործի մեր մտածելը և զգալը՝
իբր համար հաճույք ստանալու,
որը նա՝ որպես հաճույքի օրգան, վաստակել է:

Որպես ճամփորդության փորձառու ղեկավարուհի՝
զիտեմ, որ մարդ չպետք է նրան այցելի,
երբ նա դեռ հանգստանում է,
քանի որ դրան նա կարճագանքի շատ բուռն,
այդ իսկ պատճառով մենք մեր մտածելով և զգալով
նրան նրբորեն կարթնացնենք
և նրան կտանք ժամանակ, որը պահանջվում է՝
արթնանալու և աճելու համար:
Իսկ այն ընթացքում, երբ քո զգացողությունը նրան
նրբորեն բրդբրդում է՝ իրեն լավ զգալով,
ներշնչե՛լ – հաճելիորեն լավ զգալ,
արտաշնչե՛լ – Նանան բրդբրդել,
և քո մարմնի լավ զգալը նրան արևի շատ թարմ
ճառագայթի նման ժպտում է,
ներշնչե՛լ – արևի ճառագայթը որովայնում զգալ,
արտաշնչե՛լ – Նանային նրբորեն արթնացնել,
շարժվում ենք մենք այնտեղ, որտեղ այս խոսքերը
վաղուց արդեն գտնվում են և հենց ուղիղ քո գլխում:
Քո ուղեղը այս տիեզերքի ամենաուշագրավ
օրգաններից մեկն է,
քո գլխում կան մոտավորապես այնքան նեյրոններ,
ինչքան աստղեր՝ տիեզերքում,
և այս բջիջներից յուրաքանչյուրը մի մեծ գյուղ է՝
փոխկապակցված մյուս բջիջների հետ,

և այս բոլոր բջիջներն ունեն միայն մեկ կարևոր գործառույթ, բառացիորեն՝ կյանքի հաճույքն ունենալու և կյանքի այս հաճույքը ստանալու,

և այդ իսկ պատճառով էլ միգուցե զգում ես հաճույք հենց այդ հաճույքի վրա և մոտ:

Եվ մինչ մենք կթողնենք, որ քո գլուխը քո էրոտիկ երևակայությունները ապրի,

կստանանք քո մարմնի աջակցությունը զգայարանների լոգանքի միջոցով:

Շուտով դու քո զգայարանների հետ կշրջես քո մարմնի մասերի միջով,

և յուրաքանչյուրի դեպքում քեզ հարմար զգայարանը կենսախիհնդ ձևով կհամտեսի, կլսի, կտեսնի, հոտ կառնի կամ կզգա դրանք կամ էլ դրանք, քո ուշադրության ազդեցությունը կրելով, ցույց կտան, թե նրանք ինչպես են հաճույքով շոյված ու կենսախիհնդ համտեսվում, լպստվում, հոտոտվում, զարմացվում, խուտուտվում, մերսվում կամ շոյվում:

Եվ դրանից առաջ մենք ևս մեկ անգամ կշնչենք՝ մեր դիտակետը մեր մարմնին ուղղելու համար.

ներշնչե՛լ – ուշադրություն ստանալ,

արտաշնչե՛լ – ուշադիր մնալ:

Իսկ այժմ ճամփորդում ենք քո մարմնի միջով,

և այն ընթացքում, երբ քո գլուխը իրեն հարմար երևակայություն է փնտրում,

քո բոլոր վեց զգայարանների ուշադրությունը հոսում է

դեպի քո զգայական մատներ,
դեպի քո ժլատ ոտնամատեր,
դեպի քո շքեղ գլխամաշկ,
դեպի քո հեղոնիստական ձեռքեր,
դեպի քո՝ հաճույք տվող ներբաններ,
դեպի քո գրավիչ ճակատ,
դեպի քո զգայական նախաբազուկներ,
դեպի քո ազահ սրունքներ,
դեպի քո երոտիկ աչքեր,
դեպի քո հրաշագեղ ծնկներ,
դեպի քո ուժեղ բազուկներ,
դեպի քո խոհարարական քիթ,
դեպի քո դյուրիչ ազդրեր,
դեպի քո կոկետ թևատակեր,
դեպի քո անկուշտ լեզու,
դեպի քո զգայական կրծքեր,
դեպի քո կրքոտ տուտուզ,
դեպի քո երոտիկ մեջք,
դեպի քո կախարդիչ պորտ,
դեպի քո տենչող կրծքածայրեր,
դեպի քո շքեղ որովայն,
դեպի քո սիրատենչ կլիտոր,
դեպի քո հմայիչ շուրթեր,
քո ուշադիր ականջների միջով
դեպի քո՝ հաճույքով լեցուն գլուխ,

որը ենթադրաբար արդեն իսկ իրեն գրգռող
երևակայություն գտած կլինի:

Այդտեղից էլ խնդիր չէ,

եթե դու իմ խոսքերին միայն կհսով չափ ականջ դնես,

քանի որ ինչ էլ որ ես պատմեմ,

չի հասնի քո երևակայությանը:

Մա ճամփորդության մի մասն է,

որտեղ իմ ուղեկցորդուհիները ինքնուրույն են

ուսումնասիրում իրենց միջավայրը,

և ես նրանց կրկին հետ եմ բերում

մեր միասնական ճամփորդության շարունակվելու
դեպքում:

Այդ իսկ պատճառով էլ լսի՛ր իմ խոսքերին՝ որպես քո
երևակայության ետնաբեմի երաժշտություն,

քանի որ ես չգիտեմ, թե այս պահին ուր է գնում քո
երևակայությունը,

որովհետև սա քո ճամփորդությունն է,

և ես քեզ նորից հետ կբերեմ

մեր միասնական ճամփորդության շարունակվելու
դեպքում:

Վայելի՛ր քո երևակայությունը բոլոր քո
զգայարաններով հանդերձ: Յուրաքանչյուր

երևակայություն, որը քեզ գրգռում, կուրացնում և
անհանգստացնում է, այժմ հենց այն է, ինչը քեզ

հարկավոր է:

Նա միայն քեզ համար է,

դրա համար ապրի՛ր այն առավել գունավոր, մեծ,
վայրի, ոգևորիչ և գրգռիչ,
քան դու մինչ այժմ կարող էիր պատկերացնել,
և դու կարող ես բնականաբար ամեն ինչ, ինչի
ցանկությունը դու ունես՝ անկախ նրանից, թե՛
քամրթվելու, ձեռք գցելու, գրկախառնվելու,
բազմանալու, կծելու, հոտոտելու,
քսելու, տժժալու, կունիլինգուս անելու,
ձգվելու, ծառայելու, գերիշխելու,
բորբոքելու, փորձարկելու, կլորանալու,
թաց օրգանները լպստելու և խուտուտ տալու,
առկայծելու,
սղալու, սահելու, բռնելու,
դուրս տալու, հնհնալու, սիրտը տաքացնելու,
հարգանք ներշնչելու, ուղեցույց տալու, բեմադրելու,
յոդել ոճով երգելու, ճչալու, ցնծալու,
քամրթվելու, կրծմրծելու, շոյելու,
փնչալու, ծծելու, երես տալու,
մերսելու, նկարելու, ձեռնաշարժելու,
կրծելու, համտեսելու, թաց համբուրելու,
առաջարկելու, բաց պառկելու, բաց թողնելու,
երևակայելու, մտրակելու, հավաքելու,
գրգռելու, կռվելու, հեծնելու,
թափառելու, լփլփացնելու, պաչելու,
երազելու, պարելու, թմբկահարելու,
գրկելու, ոտքերին և ազդրերին փաթաթվելու,

կախարդելու, թրթռալու, հալչելու,
համբուրելով արթնացնելու, պտտվելու, ալեհեծնելու,
իրար բրդբրդելու, տոնախմբելու, միասին հոսելու,
անկախ նրանից, թե՛
քաղցր թե դառը,
ներսում թե դրսում,
գերիշխող թե հպատակ,
տեսնող թե կույր,
վերևում թե ներքևում,
ջրում թե ցամաքում,
կապկպված թե կապկպող,
նուրբ թե կոպիտ,
մերկ թե հագնված,
ակտիվ թե պասիվ,
նախաբանով թե առանց,
տղամարդու հետ թե կնոջ,
մի քանի տղամարդկանց հետ թե կանանց,
կարճ թե երկար,
պինդ թե փափուկ,
խիզախ թե պաշտպանված,
կեղտոտ թե մաքուր,
հողային թե օվկիանոսային,
զգեստավորված թե ոչ,
դիմացից թե հետևից,
դիտագննված թե չդիտագննված,
կամաց թե բարձր տնքալով,

ծանոթների հետ թե անծանոթների,
լուսավորության մեջ թե մութ տեղում,
անձրևի ժամանակ թե արևի շողերի ներքո,
մասնավոր թե բացահայտ,
արագ թե դանդաղ,
ռոմանտիկ թե կենդանական, խթանիչ, տենչագին,
սանձարձակ, ազահ, տաք, կրքոտ, անկուշտ,
անշունչ թե դանդաղ ներշնչելով ու արտաշնչելով:
Սա ինձ համար ճամփորդության ամենադժվար մասն է,
քանի որ ես իմ ցրված ուղեկցորդուհիներին,
որոնք բոլորը իրենց հետաքրքրաշարժ ձևով իրենց
ստեղծագործ գլխում
էրոտիկ հաճույք են ստանում,
այժմ նորից պետք է հավաքեմ:
Այդ պատճառով ների՛ր, որ ես քեզ պետք է շատ
դանդաղ քո երևակայությունից հետ դեպի մեր
ճամփորդություն բերեմ,
քանի որ դու միզուցե հիշում ես,
որ ճամփորդության այս մասը նաև նպատակ ունի՝
մեր հաջորդ կայանն արթնացնելու:
Եվ եթե ես տատանումներն այստեղ ճիշտ
ներկայացնեմ, ապա մենք այժմ բավականին
դանդաղորեն պատրաստ ենք շարունակելու թափառել:
Քո մտքերը կենդանացած են,
և քանի որ նրանք իրենց երևակայության մեջ
արքայավայել ապրում են,

մենք ունենք տարածք՝
քո որովայնին ականջ դնելու,
որը շարունակում է իրեն լավ և տաք զգալ
և թողնում տարածք քո զգացողության համար,
որն այժմ թեթևորեն և վստահորեն ուրախանում է մեր
ճամփորդության հաջորդ կայանի համար:
Դու կարող ես քո աչքերը փակ պահել,
որովհետև մեր Նանան,
որին մենք շուտով կայցելենք,
բնակվում է մթության մեջ,
իսկ նրանում ճառագայթում է տաք լույս,
որը կարելի է տեսնել միայն փակ աչքերով:

IV

Եվ զգալու համար, թե արդյոք Նանան այժմ պատրաստ
է մեզ ընդունելու,
մենք, ինպես մեզ դա հայտնի,
միասին կշնչենք.
Ներշնչե՛լ - բացվել:
Արտաշնչե՛լ – քո կենտրոնը զգալ:
Ներշնչե՛լ - բացվել:
Արտաշնչե՛լ – Նանան զգալ:
Եվ միգուցե դու զգում ես այժմ թեթև թրթիռ կամ նաև
զարկ քո կենտրոնում:
Ուղղակի շարունակի՛ր այդպես շնչել,

ինչպես որ ես քեզ ցույց եմ տվել:

Այն ինչ դու զգում ես, մեր Նանայի լեզուն է:

Ցավոք նա բերան չունի և չի կարող ուղղակիորեն մեզ հետ խոսել.

որպես ճամփորդության փորձառու ղեկավարուհի ճանաչում եմ նրան վաղուց արդեն,

և նա ինձ թույլ է տվել թարգմանել,

թե ինչ է նա մեզ ուզում ասել:

Այսպիսով զարմացի՛ր,

երբ ես այժմ նրա լեզուն կթարգմանեմ մեր խոսքերով.

„Բարի՛ գալուստ մեզ երկուսիս:

Ես Նանան եմ:

Դու գիտես՝ անունները մեզ համար կարևոր չեն,

այդ պատճառով անվանում եմ ես ինձ հենց այնպես,

ինչպես որ դու ուզում ես ինձ անվանել:

Բոլոր ժամանակների մարդիկ իմ հրաշքին շնորհել են տարբեր անուններ՝

Աֆրոդիտե, Ֆրեիյա, Մամա Ալլիա, Քելեիա, Վենուս, Էփանա, Լադա, Անահիտա, Իաննա, Հերա, Ռիադա և Արադիա:

Ես աստվածուհի եմ քո կենտրոնում:

Առանց ինձ դու ծնված չէիր լինի ու չէիր կարող ծնել:

Առանց ինձ չկա ոչինչ, քանի որ ես ապրելու ցանկությունն եմ:

Միգուցե երբեմն ես քեզ ծանրաբեռնում եմ,

քանի որ ես ահավոր անարգել եմ,

անչափ տաքարյուն,
ահավոր համարձակ,
կենսուրախ հետաքրքրասեր,
զգացմունքային վայրի,
տենչալի գրավիչ,
գաղտնի կենսական,
ստեղծագործ պարող,
անդիմագրավելի խորհրդավոր,
լիարժեք էկստատիկ,
աֆրոդիտային խարիզմատիկ,
չափից ավելի բուռն,
անկուշտ օրգիաստիկ,
և ինչպես դու զգում ես՝ կենդանի զարկող:
Ես բացում եմ քո սիրտն ու ոգին
և բուժում քո մարմնի վերքերը:
Ես քո վուլվա-կանացի էներգիան եմ,
որը հաճույքով ընդունում է ֆալուս-առնական
էներգիան:
Ես գիտեմ, որ քո աշխարհում
ինձ պես աստվածուհիները
որոշ մարդկանց ծանրաբեռնում են,
այդ իսկ պատճառով ես ինձ շատ հաճախ հետ եմ
պահում և քեզ թողնում շարունակել քո ճանապարհը:
Քո ճանապարհորդության ղեկավարուհին ինձ պատմել
է, որ դա ձեր աշխարհում հանգստանալ է կոչվում:
Այնուամենայնիվ դու զգում ես, երբ դու ցանկանում ես,

ես միշտ ունեմ բաց շոշափելիքներ քո ցանկությունների համար, և հաճույքով արթնանում եմ, երբ դու ինձ կանչում ես:

Որպես աստվածուհի անհրաժեշտ չե՛՝

ինձ ամեն պահի նկատելի դարձնել,
որովհետև տիեզերքն այսպես թե այնպես ինձ հետ համակարծիք է.

Այն զարկում է և թրթռում,
այն վանում է և զգում,
այն ընդարձակում է և պայթում,
այն ընդունում է և նվիրում:

Եվ դու գիտես, ինչպես վարվել աստվածուհու հետ,
ով ինձ վրա ճնշում է գործադրում.

նրան ես մերժում եմ,
քանի որ աստվածուհիները ունեն իրենց սեփական կամքը:

Երբ մենք մեզ այնուամենայնիվ սահմանափակ ուշադրությունը, ոգևորվածությունը, սերն ու ժամանակը, որը մենք վաստակել ենք,
նվիրում ենք,

և երբ դուք ինձ զգացմունքային միջավայր, ախորժալի ուտեստներ, արբեցնող բույրեր, գրգռող երաժշտություն, մարմնական ուրախություն պատճառող հպումներ եք դնում իմ հաճույքների զոհասեղանի վրա,
ապա ես նվիրում եմ քեզ ընտրյալ էքստազ և շքեղ օրգազմ,

որոնք քեզ կթարմացնեն, կլցնեն և կհարստացնեն
էներգիայով:

Եվ կախված այն բանից, թե դու ինչքան շատ ես ինձ քո
մտքերը, քո զգացմունքը և քո մարմինը վստահում

և թե ինչքան ենք մենք իրար հետ ձուլվում,

նվիրում եմ քեզ ահռելի և վայրի հրաբխային օրգազմ,

որը քեզ խորը և կարճ ժամանակով կբավարարի

կամ էլ մենք կձուլվենք ազատ հոսող երեք օրգազմային
ալիքներից մեկում,

որը դեպքում մեր էներգիան հզորությամբ և ճկունորոն
կտարածվի մեր մարմնում,

իսկ մենք պտտվում ենք շուրջը և վայելում բուռն
աղբյուրը,

որը մեզ ավելի ու ավելի է ներքաշում մեր հաճույքի մեջ,

և ինչքան շատ ենք մենք թողնում, որ այս էներգիան
ներս հոսի,

այնքան շատ է այն մեզ լցնում:

Մենք չենք հեծնում ալիքը,

մենք ալիքն ենք,

մեր մարմինը չի թրթռում,

մենք թրթռոցն ենք,

ոչ թե մեր զգայարաններն են ընկալում,

այլ մենք ենք տեսնելը, լսելը, համ զգալը, հոտ առնելը և
շոշափելը,

մենք չենք շնչում,

մենք շնչառությունն ենք,

մենք օրգագմը չենք զգում՝
մեզ ընդարձակելով կամ զսպելով,
որը մեզ տալիս է՝ մեզ հետը վերցնելով,
որը մենք մեզ մատուցում ենք, քանի որ նա մեզ այնպես
է նվիրում, որ մենք կարողանանք օվկիանոսով
ճանապարհորդել,
քանի որ նա մեզ՝ ալիք հեծնողներիս թույլ է տալիս
հետը ճամփորդել,
իսկ մենք ընկնում ենք ճամփա,
քանի որ նա մեզ տալիս է այն,
ինչ մենք վաստակել ենք,
և այսպես նվիրում ենք մենք աշխարհին, իսկ աշխարհն
էլ՝ մեզ չափից ավել ուրախություն,
երջանկացնող սեր,
ներքին հանգստություն
և խորը խաղաղություն:
Այսքանը, ոչ ավել և ոչ մի դեպքում պակաս,
որը ես քեզ ուզում էի ասել:
Շնորհակալ եմ քեզ, որ ինձ ականջ դրեցիր:
Եվ ինչպես դու զգում ես,
ես միշտ քո կողքն եմ, երբ դու իմ կարիքն ունես:
Եվ միշտ կպատասխանեմ քեզ իմ լեզվով,
երբ դու ինձ կանչես:
Ես ուրախ եմ՝ քո մեջ ապրելու իրավունք ունենալու
համար:
Եվ

մաղթում եմ մեզ շատ հաճույք
քո հետագա ճամփորդության ընթացքում“:

Այսպես, ահա և ես՝

քո ճամփորդության ուրախ-կենսախինդ
ուղեկցորդուհին, և ինչպես Նանան նշեց,

մեր ճամփորդությունը շարունակվում է առաջ
ընթանալ:

Բայց և այնպես, մինչ մենք էլ ավելի շատ ապրումներ
ունենանք, ուզում եմ, որ մենք միասին այստեղ կրկին
Ժամանենք,

և ինչպես դու գիտես, դա շատ պարզ է ստացվում՝

ներշնչե՛լ – թողնել, որ մտքերն անցնեն,

արտաշնչե՛լ – խորը շնորհակալություն զգալ,

ներշնչե՛լ – մարմինը զգալ,

արտաշնչե՛լ – խորը թուլացում զգալ,

ներշնչե՛լ – զգացողությանն ականջ դնել,

արտաշնչե՛լ – լավ զգալ:

V

Այսպես, իսկ այժմ արդեն իսկ մեր ներքին աչքերը
բացված են բավականաչափ՝ մեր ճամփորդության
հաջորդ փուլ մտնելու համար:

Այս ճամփորդության ընթացքում մենք այցելել ենք
բազմաթիվ կայաններ՝

մեր մտքերը, մեր զգացողությունը, մեր մարմինը և մեր Նանան:

Մրանք բոլորը քո տարրերն են
և միասին կազմում են քո աուրան և լուսարձակումը,
և ինչքան շատ են քո տարրերը մեկը մյուսին ականջ
դնում, իրենց տարբեր լեզուներն ու կարիքները
ընդունում և ընկերական միմյանց հետ ապրում,
այնքան գրավիչ է դառնում քո լուսարձակումը:

Դրանից ելնելով՝ մեր ճամփորդության հաջորդ կայանը
քո աուրան է,

այսինքն այն, ինչը չենք տեսնում աչքերով,

ինչը չենք լսում ականջներով,

ինչը լեզուն չի կարող համտեսել,

ինչը քիթը չի կարող հոտոտել,

և ինչը կարելի է ինտուիտիվ զգալ՝

առանց հստակ բացատրելու,

թե մեկն ինչ է զգում:

Եվ աուրայի այս զգալը կանվանեմ վեցերորդ
զգայարան, որին բոլոր զգայարանները միաժամանակ
մասնակից են՝

առանց որևէ զգայարանի առավելության:

Եթե դու հիշում ես մարդկանց հետ հանդիպումները,

ապա միգուցե կարող ես հաստատել,

որ դու նուրբ հոտառություն ունես այն տեսանկյունից,

թե արդյոք մարդիկ դրական կամ բացասական
լուսարձակում ունեն քեզ վրա, թե ոչ,

արդյոք նրանք քեզ վանում են թե գրավում,
և մարդու այդ լուսարձակմամբ կարելի է հասկանալ,
արդյոք նա իր հետ դեռևս նեքին պայքար է մղում,
թե արդեն իսկ սովորել է կարևոր առաջադրանքները՝
ոչ թե իր հետ կովելու համար,
այլ ընկալելու,
որ խոսքը ներքին ընկերակցության մասին է,
որն ինքն իրեն կրկին ու կրկին նորովի ճանաչում է,
որը հաճույքով սովորում է իր տարբեր լեզուները
և փոխադարձ աջակցում իր զգայարանների
ցանկությունների դեպքում՝
առանց սեփականները աչքից բաց թողնելու:
Իմ մտքերը խոսում են քո մտքերի հետ,
իմ զգացողությունը խոսում է քո զգացողության հետ,
իմ մարմինը խոսում է քո մարմնի հետ,
և իմ Նանան խոսում է քո Նանայի հետ,
և իմ մարմնի յուրաքանչյուր մասը միաժամանակ
խոսում է քո մարմնի ամեն մի մասի հետ,
և միևնույն ժամանակ խոսում եմ նաև ես ինքս ինձ հետ.
այսպես, ամեն մի թարմացնող մարդկային շարժում
մտքերից, զգացողություններից և հպումներից
կազմված կենսախինդ մի պար է.
մենք ապրում ենք միասին և ունենք միասնական
նպատակ՝ մեր կյանքն ավելի խաղաղ և ուրախ
ապրելու,
և միայն միասին կհասնենք մենք այդ նպատակին:

Եվ միայն անցյալի քննարկմամբ, որոնք էլ հենց ապրելու համար դրան են պատկանում, սովորել ենք խաղաղության ներքին պայմանագիր կնքել.

մեր յուրաքանչյուր տարրը պատկանում է մեզ:

Յուրաքանչյուր տարր այժմ այնպես է, ինչպես նա է ուզում լինել:

Եվ յուրաքանչյուր տարր վաստակել է իր ուշադրությունը:

Եվ միասին մենք ավելի ուժեղ ենք, քան թե յուրաքանչյուր առանձին տարր երբևէ կարող էր լինել, և այս միասնական ուժերով էլ շարժվում ենք աշխարհում:

Իսկ որպես ներքին ընկերակցություն թույլ չենք տալիս, որ մարդիկ մեզ վրա ազդեցություն գործեն,

որոնք մեզ որպես թիմ չեն ընդունում,

քանի որ նրանք ներքուստ դեռևս վիճված են:

Եվ մենք ուրախանում ենք այն մարդկանցով,

որոնց մեր առանձին տարրերը ոգեշնչում են:

Եվ մենք սիրում ենք մարդկանց, որոնք

մեզանում առկա բոլոր էլեմենտները ուրախությամբ և խաղաղությամբ հասցնում են գրնգալու:

Իսկ մեր շնչող ուշադրությամբ մենք կարող են ազդել,

արդյոք մենք մեզ ուրախությամբ բացել ենք ուզում,

թե տհաճ տատանումների դեմ խաղաղ պաշտպանիչ վահան ենք կառուցում:

Դու գիտես արդեն երկար ժամանակ,
 սա կատարվում է շատ պարզ՝
 ներշնչե՛լ – աուրան բացել,
 արտաշնչե՛լ – աուրան փակել,
 ներշնչե՛լ – էներգիա լիցքավորել,
 արտաշնչե՛լ – թողնել, որ էներգիան օրգանիզմում
 շրջանառվի,
 ներշնչե՛լ – ոգեշնչում ստանալ,
 արտաշնչե՛լ – ներքին զգացողությանն ականջ դնել,
 ներշնչե՛լ – ընկերներին հանդիպել,
 արտաշնչե՛լ – տրտում մարդկանցից հեռու մնալ:
 Ներշնչե՛լ – թողնել, որ ուրախ կենսաէներգիան
 ներհոսի,
 արտաշնչե՛լ – թողնել, որ բացասական
 տատանումներն արտահոսեն:
 Ներշնչե՛լ – լույս ստանալ,
 արտաշնչե՛լ – մթությունը վտարել ներքին լույսով:
 Ներշնչե՛լ – բաց ընդարձակություն և կենդանի
 ջերմություն զգալ,
 արտաշնչե՛լ – բաց ընդարձակությունը և կենդանի
 ջերմությունը պաշտպանել:
 Եվ միգուցե դու զգում ես այժմ առանձնահատուկ
 էներգիա մեր շրջանի մեջ:
 Իսկ այս էներգիան մենք կթողնենք, որ շարունակի
 շրջանառվել մեր մեջ և մեր շուրջ այնպես,
 որ մենք նրան միշտ ունենանք

և մեզ կապի մարդկանց, բնության, երկրագնդի,
տիեզերքի, եղելիության հետ,
և միգուցե այժմ զգում ես,
թե ինչպես են մեր ատրաները միմյանց սիրալիր
շոշափում,
ինչպես են նրանք միմյանց հետ ոգու խաղեր տանում,
ինչպես են պարզ ու լուսավոր ներդաշնակվում, կենսալի
թրթռում և նուրբ տատանվում:
Եվ այս ատրայով էլ հանդիպում ենք մեր
ճամփորդության վերջին կայանին...

VI

Այո, ցավով պետք է ասեմ, որ մեր ճամփորդությունը
շուտով կավարտվի,
բայց մի՛ անհանգստացիր,
քո ներքին ճամփորդությունը շարունակվելու է,
իսկ գեղեցիկ ապրումները,
որոնք դու այս ճամփորդության ընթացքում ունեցար,
խինդը, որին դու հանդիպեցիր,
ուրախ մտքերը և հաճելի զգացումները
կշարունակեն քեզ քո ճանապարհին ուղեկցել:
Դու գիտես՝ յուրաքանչյուր լավ ճամփորդություն
ավարտվում է տոնով, որպեսզի այն լավ հիշվի:
Եվ այս տոնը, որը մենք նշում ենք,

տիեզերքի տեսարանն է, որի մի մասն էլ մենք ենք՝
որպես կենդանի արարածներ,
և քանի որ պետք չէ նշել տոնն առանց հյուրընկալողի,
իսկ ես ծախսերից կամ ջանքերից չեմ վախենում,
և քանի որ ամեն լավը, ինչպես սերը, ուրախությունը և
ընկերությունը, անվճար է,
մեր ճամփորդության ավարտին հրավիրել եմ ես
տիեզերքին,
որպեսզի նա կարողանա մեզ ցուցադրել իր
ամենագեղեցիկ հրավառությունը:
Բայց և այնպես, մինչ նա կկարողանա մեզ այն
շքեղորեն ցույց տալ, ինչպես որ նա հաճույքով դա
անում է,
կշնչենք մենք ևս մեկ անգամ շատ խորը այնպես,
ինչպես մենք ենք դա ցանկանում,
որպեսզի մեր աուրան թրթռա՝
ներշնչե՛լ – հաճույքով ճոճվել,
արտաշնչե՛լ – շարունակել հաճույքով ճոճվելը:
Ներշնչե՛լ – հաճույքով ճոճվել,
արտաշնչե՛լ – շարունակել հաճույքով ճոճվելը:
Եվ ինչպես դու այժմ միգուցե զգում ես,
տիեզերքը առողջ մտքով ժամանել է մեզ մոտ:
Իսկ ես ինձ թույլ կտամ,
որ այն ուղիղ քեզ հետ խոսի,
որովհետև ես՝ որպես ճամփորդության լավ
ղեկավարուհի, գիտեմ նրա լեզուն

և հաճույքով կթարգմանեմ.

„Բարի՛ գալուստ:

Ես տիեզերքն եմ՝

վայր, որտեղ դու բնակվում ես:

Ես շնորհակալ եմ և ուրախ,

որ դու ճամփորդել ես ինձ մոտ,

և ներողություն եմ խնդրում բոլոր այն
անախորժությունների համար, որոնք ես քեզ կյանքի
մինչ այս իրականացված ճամփորդության ընթացքում
պարզեցել եմ:

Ես կցանկանայի լինել ավելի լավ հյուրընկալող

և ուզում եմ իմ յուրաքանչյուր այցելուին
ամենագեղեցիկ ժամանակի հնարավորությունը տալ,
բայց ցավոք մաթեմատիկան և ֆիզիկան ու ցավոք սրտի
իմ բնակիչներից մի քանիսը սահմաններ են գծում:

Իմ առաջադրանքը տարրերի միացումն ու անջատումն
է, գրավելն ու վանելն է,

ընդարձակումն ու սեղմումն է,

տատանվելն ու թրթռալն է

և պարը:

Միգուցե դու քեզ զգում ես իմ մեջ երբեմն փոքր,

քանի որ ես իմ՝ կենդանի արարած լինելու
տեսանկյունից անհավատալիորեն մեծ եմ թվում,

բայց իրականամում դա լրիվ հակառակն է.

ես ուրախ եմ յուրաքանչյուր հյուրի համար,

որն ապրում է ինձանում,

քանի որ ես չունեմ աչքեր, ականջներ, քիթ, լեզու կամ մաշկ: Առանց հյուրերի ես կլինեի կույր, խուլ և լալ, զգացումներից զուրկ մի վայր,

որի գեղեցկությունը ոչ մեկին չէր կարող զարմացնել, այդ իսկ պատճառով էլ ուրախ եմ, որ դու հիմա այստեղ ես, քանի որ առանց ձեզ՝ կենդանի արարածների ես չէի կարողանա ինքս ինձ տեսնել, լսել, համտեսել, հոտ առնել և զգալ:

Եվ միևնույն է, թե դու քեզ երբեմն ինչքան փոքր կարող ես զգալ,

այն ամենը, ինչ ինձ մեծ է դարձնում, դու կգտնես նաև քեզանում:

Քո ատումները իմ աստղային փոշին են,

իսկ հազարավոր արևները օգտագործել են իմ էներգիան և բաժանվել հզոր պայթյունների՝

ձեզ հնարավոր դարձնելու համար:

Եվ նույնիսկ եթե ես քեզ ամեն ինչ հնարավոր դարձնել չեմ կարող,

քանի որ իմ ունակությունները սահմանափակ են,

այդ դեպքում քո մտածելը, զգալը և գործելը քեզ հնարավորություն են տալիս՝ իմ մեջ այնպես տեղավորվելու,

ինչպես քեզ և մեզ դուր է գալիս:

Քո միլիոնավոր նախնիներն արդեն բնակվել են ինձանում և ինձանում իրենց հարմար ձևով դասավորվել,

շատերը՝ ծովում, մյուսները՝ ցամաքում,
մի քանիսը՝ ծառերի վրա, իսկ մյուսները՝
քարանձավներում,
և բոլոր այս նախնիները կյանքից այնքան հաճույք էին
ստանում, որ նոր սերնդին հնարավորություն են ընձեռել՝
ինձ վրա, ինձանում, ինձանից, ինձ մոտ և ինձանում
ապրելու,
և հետևապես ուզում եմ նաև քեզ համար հնարավոր
դարձնել՝ էլ ավելի հիասքանչ ապրելու,
բայց այդ դեպքում ես քո օգնության կարիքն ունեմ,
քանի որ ես ինձ չեմ կարող փոխել,
որովհետև որպես մեծ տիեզերք ես շատ դանդաղաշարժ
եմ,
և իմ բնական սահմաններն ինձ խոչընդոտում են
շարժվելու կամ ինձ վրա առկա դժկամ կենդանի
արածներին փոխելու ընթացքում,
բայց և այնպես ես նվիրել եմ քեզ մտքեր, զգացումներ,
մարմին և Նանա աստվածուհի,
որոնցով դու քո կյանքն այնպես կարող ես դասավորել,
որ այն քեզ համար առավել ֆենոմենալ լինի,
քան թե դու հիմա կարող ես պատկերացնել,
և երբ դու ինձ ու ես քեզ սիրալիր հանդիպեմ,
և դուք ձեզ ու դուք ինձ ընկերական հանդիպեք,
որը երկու դեպքում էլ վաստակել ենք,

ապա քո կյանքը, այսինքն քո մտքերը, զգացումները, գործողությունները և դու, հենց որ դու աչքերդ բացես, կկրկնապատկվեն,

և իմ կողմից նաև կեռապատկվեն,

ներքին հրավառություն միացրած՝

արկածային - ակտիվ - առավել աֆրոդիտային,

անկրկնելի - նշանակալի - առավել երջանկացնող,

սինեաստիկ - խարիզմատիկ - առավել գրավիչ,

բուրող - նրբագեղ - առավել դինամիկ,

յուրօրինակ - զգայուն - առավել էքստատիկ,

ոգևորող - ֆանտաստիկ - առավել հիանալի,

հաճույքային - գաղտնի - առավել սիրալիր,

կատակասեր - անարգել - առավել տաքարյուն,

անհատական - բնագղային - առավել հարգալից,

այժմյան - ցնծող - առավել երիտասարդ,

թանկարժեք - ուժեղ - առավել արտիստիկ,

կենդանի - կրքոտ - առավել սիրարժան,

առեղծվածային - կախարդական - առավել

հեքիաթային,

բնական - սննդարար - առավել համող ուտող,

անպարկեշտ - օվկիանոսային - առավել օրգազմային,

յուրահատուկ - շքեղ - առավել նրբահամ,

կենսալի - կենսուրախ - առավել գունավոր,

ազդեցիկ - ռոմանտիկ - առավել դյուրիչ,

սենսացիոն - տպավորիչ - առավել զգացմունքային,

թուվալուական - երագային - առավել խորիմաստ,

անհավատալի - անըմբռնելի - առավել անդիմադրելի,
ցնծող - հմայիչ - առավել թուլացնող,
վայրի - կանացի - առավել հիանալի
և միջմարդկային - հուսալի - առավել նուրբ“:

VII

Մեր ճամփորդությունը դեպի քո ներքինը շուտով
կավարտվի, և ես այժմ ունեմ գեղեցիկ մի
առաջադրանք՝

քեզ դանդաղորեն կրկին հետ ուղեկցելու,
իսկ դու ունես տիեզերական երջանկություն,
քանի որ դեռ հրաժեշտի ժամանակ տիեզերքը և Նանան
ինձ շնջացել են,

որ դու նրանց շատ ես դուր գալիս,
և քեզ հրավիրում են մեկ այլ ճամփորդության,
հենց որ դու քո ներքին աչքերը բացես,
իսկ այս հետաքրքրաշարժ ճամփորդությունը քո
կյանքն է:

Եվ այս ճամփորդությանը,
որին քեզ քո զիլ ընկերներուհիները և ընկերները
ուղեկցելու են դեպի
այս տիեզերքի անտառներ և լեռներ,
քաղաքներ և գյուղեր,
ծովեր, լճեր և գետեր,
հրավիրում եմ քեզ նրբորեն այնպես, որ մենք՝

ներշնչենք՝ դանդաղորեն ձգելով մեր գեղեցիկ
մարմինը,

արտաշնչենք՝ ինտենսիվ կերպով թուլանալով,

ներշնչենք՝ մեր գեղեցիկ մարմինը ձգելով,

արտաշնչենք՝ ինտենսիվ կերպով թուլանալով,

ներշնչենք՝ մեր աչքերով առկայծելով,

արտաշնչենք՝ մեր աչքերը բացելով,

ներշնչենք՝ սիրով լեցուն այստեղ ժամանելով,

արտաշնչենք՝ ժամանած սիրով լեցուն լինելով:

Այսպես, և ահա կրկին մենք:

Հուսով եմ՝ դու իրականացրեցիր հաճելի մի
ճամփորդություն,

և ես խոնարհվում եմ ձեր՝ խիզախ ճամփորդողների
առաջ,

և եթե քո մարմինն ինձ հետ համաձայն է,

ապա միզուցե կզգաս ներքին ծափահարություն,

որի համար ես շատ ուրախ եմ

և հույս ունեմ՝ կարող ենք այսօր դեռ միասին ժամանակ
անցկացնել,

որը տիեզերքը մեզ սիրալիորեն նվիրել է:


Ես մաղթում եմ մեզ բոլորիս խաղաղություն:

*(Այստեղ կարող է կարդացողը իր համար մեկ այլ
իրավիճակում տարօրինակ ժեստ ցույց տալ, որը նա
հենց այս պահի համար տեղին է համարում):*

Շանթի՛:

(Այստեղ նույնպես: Մնացյալը լռությունն է, գրկախառնությունը և գրուցելը կամ ինչպես միշտ այն ամենը, ինչը տիեզերքը ինչ-որ մեկի համար երևան է հանում):

शान्तिः



ॐ